

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Բերքի մթերումների հետ կապված խնդիրներ չեն լինելու

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Վայոց ձորի մարզ, որտեղ հրավիրվել էր համատեղ խորհրդակցություն՝ ընթացիկ տարում խաղողի արտադրության, մթերման և իրացման գործընթացի կազմակերպմանն առնչվող խնդիրների քննարկման նպատակով: Խորհրդակցությանը մասնակցում էին Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, Հայաստանի գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանը, վերամշակող ընկերությունների ղեկավարներ, մարզում խաղողի մշակությամբ զբաղվող համայնքների ղեկավարներ:

Իր բացման խոսքում նախարարը նշել է, որ խորհրդակցության հիմնական նպատակն է՝ մթերումների սեզոնի մեկնակին ընդառաջ, բոլոր կողմերի հետ քննարկել առկա ընթացիկ հարցերը, որպեսզի գյուղացիական տնտեսությունները հավաստիանան, որ այս տարի խաղողի, ինչպես նաև գյուղատնտեսական այլ մթերքների իրացման հետ կապված խնդիրներ չեն լինելու, և առանց որևէ մտավախության ակտիվացնեն իրենց աշխատանքները: «Մեր գյուղացիական տնտեսություններն այսօր պետք է ամբողջովին վստահ լինեն, որ իրենց կողմից արտադրված բերքն, անկախ որևէ հանգամանքից, ամբողջ ծավալով, առանց որևէ խնդրի կիրացվի: Իսկ գործընթացը պատշաճ և հստակորեն կազմակերպելու համար պետության կողմից իրականացվում են բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Մենք խիստ հետևողական ենք լինելու, որպեսզի բերքն այգիներում չմնա, և մթերումները ժամանակին իրականացվեն: Գյուղացին այս հարցում մտահոգություն չպետք է ունենա», - շեշտել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը հավելել է, որ այս հարցերը գտնվում են հանրապետության ղեկավարության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում, և առաջիկայում վերամշակող ընկերությունների գործունեությունը խթանելու և նրանց կողմից բարձրացված հարցերին լուծումներ տալու նպատակով, նախատեսվում է նաև քննարկում կազմակերպել ՀՀ վարչապետի մոտ:

Է 2

Շահագործման է հանձնվել նոր ժամանակակից սպանդանոց

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքում մասնակցել է նորակառուց սպանդանոցի բացման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տալիսը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի դաշտային ծրագրերի պատասխանատու Գերոլդ Բողեկերը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Սևնդամբերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը, տարբեր միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Սպանդանոցը հիմնվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Հունաստանի Հանրապետության կառավարության ֆինանսավորմամբ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Է 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Արտադրված է Հայաստանում

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդես կատարած այցի շրջանակում, այցելել է նաև «3 սերունդ» նախաձեռնության տաղավար: Նախագահը ծանոթացել է ներկայացված 8 արտադրատեսակներին, գրուցել արտադրողների հետ: Սերժ Սարգսյանը հետաքրքրվել է, թե յուրաքանչյուր արտադրող ինչ ծավալի արտադրանք է վաճառում Հունաստանում և արտահանման ինչ հնարավորություններ և ներուժ ունի նրանցից յուրաքանչյուրը:

«Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ը ներկայացել էր «3 սերունդ» նախաձեռնության տաղավարով: ԱՄՆ ՄՉԳ ֆինանսավորմամբ և ՓՄՁ ՉԱԿ-ի ու գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում մեկնարկած շարժման նպատակն է, որպեսզի հայի 3 սերունդը՝ պապը, զավակը և թոռնիկը, մնան և արարեն հայրենիքում: Մեր տաղավարում իրենց արտադրանքն էր ներկայացրել 8 արտադրող՝ Հայաստանի տարբեր մարզերից: Չիր, ձիթապտուղ, ապխտած պանրի տեսականի, այծի և հովանդական պանիրներ, խմորեղեն, քաղցրավենիք, սոճու կոնեթից մուրաբա և մեղր, գետնանուշ՝ որոնք ներկայացված են եղել ցուցահանդեսում, սակայն այդքանով արտադրությունները չեն սահմանափակվելու:

ՀՀ կառավարությունում

Կառավարությունում քննարկվել է 2015թ. գարնանը ջրօգտագործողներին ոռոգման ջուր մատակարարելու հարցը: ՀՀ ՏԿ և ԱԻՆ հիդրոմետ ծառայության տվյալների համաձայն, գետերի ջրահավաք ավազաններում առկա է բավական հաստ ձնաշերտ, ինչպես նաև հավանական է, որ գարնանը լինեն առատ տեղումներ և վարարումներ: Եվ քանի որ երկրի որոշ տարածաշրջաններում վեգետացիայից առաջ անհրաժեշտ է խոնավալիցք հաղորդել և իրականացնել աղակալած հողերի վազում, ուստի կառավարությունը գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով, ընդունել է որոշում, որը հնարավորություն կտա ջրօգտագործողների 80 հազար հա հողատարածություններին ոռոգման ջուրը մատակարարել անհատույց:

Վարչապետ Յուրի Կերիսիանի խոսքով՝ հարցը քննարկվել է ՀՀ նախագահի, գյուղատնտեսության նախարարության, ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ: Որոշվել է՝ մայիս ամսվա ընթացքում, գետերի վարարման հետևանքով հեղեղումը կանխելու նպատակով, «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ներին թույլատրել ջուրը մատակարարել առանց հասույթ ձևավորելու, ինչը կարևորագույն աջակցություն է հողօգտագործողներին: Վարչապետը ջրտնտեսությունն հանձնարարել է մեծ պատասխանատվություն ցուցաբերել և հետևել միջոցառման արդյունավետությանը:

2011թ. հաստատվել էր Երևանի անտառապետության «Էրեբունու» անտառտնտեսության 51 հա տարածքի անտառապատման ծրագիրը: 20.5 հեկտարի անտառապատումն ամբողջությամբ ավարտված է:

Ծրագրի երկրորդ փուլի 31 հա տարածքի անտառապատումը դեռևս հնարավոր չի եղել իրականացնել՝ Ազատի

Է 2

Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր	Էջ 3
Իրավիճակի գնահատման կառավարում	Էջ 6
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1 **ՀՀ կառավարությունում**

ջրամբարում ջրի սակավության պատճառով, ուստի աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը: 2015 թ. -ին նախատեսվում է իրականացնել շուրջ 15 հեկտարի, 2016-ին՝ 16 հեկտարի անտառապատում: Կոտայքի մարզի 100 հա անտառային տարածքը կվերականգնվի կոնդաշվային վերածի օժանդակման միջոցով: Այս աշխատանքների կատարման համար կառավարությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացրել է մոտ 50 մլն դրամ:

• Կառավարության մեկ այլ որոշման իրականացմամբ, հնարավորություն կընձեռվի 2015թ. հանրապետություն ներկրել 257 գլուխ տոհմային երկնջ. դրանք և դրանցից ստացված սերունդը կօգտագործվեն տավարաբուծության զարգացմանն ուղղված տոհմասելեկցիոն աշխատանքներում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

1 **Բերքի մթերումների հետ կապված խնդիրներ չեն լինելու**

Նախարարը հորդորել է վերամշակող ընկերություններին՝ դիվերսիֆիկացնել արտահանման ուղղությունները՝ մեկ շուկայից կախվածությունը թուլացնելու և հնարավոր ռիսկերն առավել արդյունավետ կառավարելու համար: Անդրադարձ է կատարվել նաև բերքատվության ավելացման, ինչպես նաև բերքի որակի բարելավման հարցերին, որը նույնպես արտահանման ծավալների ընդլայնման տեսանկյունից, կարևոր խոչընդոտ է հանդիսանում: ՀՀ գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանն իր հերթին հավաստել է, որ գյուղացիները բերքի մթերումների հետ կապված խնդիրներ չեն ունենա, և ընկերությունները պատրաստ են ապահովել ամբողջ բերքի իրացումը՝ շեշտելով մթերումների գնի և ժամկետների կարգավորման հարցերի կարևորությունը: Անդրադառնալով մթերումների գների հետ կապված բարձրացվող հարցերին՝ Սերգո Կարապետյանն ընդգծել է, որ գինը որոշում է շուկան, որը միևնույն ժամանակ պետք է խելամիտ լինի և երկուստեք շահավետ՝ գյուղացիների և վերամշակող ընկերությունների համար: Նախարարն անդրադարձել է նաև պայմանագրային հիմունքներով աշխատանքների կազմակերպման անհրաժեշտության մասին՝ հորդորելով ակտիվացնել բերքի իրացման պայմանագրերի կնքման գործընթացը:

Խորհրդակցության ավարտից հետո նախարարը եղել է նաև Ազատել համայնքում, որտեղ, «Հայկական միրգ» ծրագրի շրջանակում, հիմնվել են շուրջ 20 հեկտար բալենու, սալորենու, կեռասենու, նեկտարինի և ընկուզենու այգիներ: Ծրագրի հրավերով Հայաստան էր ժամանել նաև Ֆրանսիացի մասնագետ, ով գյուղացիներին ներկայացրել է ընկուզենու մշակության տեխնոլոգիաների իրենց փորձը: Նախարարը նշել է, որ ծրագիրը բավականաչափ շահավետ և հատկապես արդյունավետ է փոքր գյուղացիական տնտեսությունների համար: Այն հնարավորություն է ընձեռում, 12 տարի ժամկետով, վարձակալության հանձնել իրենց պատկանող հողատարածքները, որտեղ բացառապես ծրագրի միջոցներով բարձրարժեք սորտի ծառատեսակներ են տնկվում: արդյունքում ստացված շահույթի 25 տոկոսը հետ է վերադարձվում հողատարածքի սեփականատիրոջը: Բացի այդ, գյուղացիներն իրենք են աշխատում այդ նոր հիմնված այգիներում, որի դիմաց նույնպես վարձատրվում են: Իր կողմից կատարված ներդրումները հետ բերելուց հետո, վարձակալող ընկերությունը պարտավորվում է գյուղացուն հետ վերադարձնել բերքատու այգին: Գյուղացիների հետ գրույցները ընթացքում նախարարը հորդորել է նրանց միավորվել և կոոպերատիվներ ստեղծել, ինչը կօգնի համատեղ ջանքերով խնդիրներին առավել հեշտ և արդյունավետ լուծումներ տալ:

1 **Շահագործման է հանձնվել նոր ժամանակակից սպանդանոց**



Ծրագրի շրջանակում կառուցվել են ևս 4 տիպային սպանդանոցներ՝ Չառիթափ, Արզնի, Օձուն և Մայակովսկի համայնքներում: «Նմանատիպ ժամանակակից սարքավորումներով հագեցած սպանդանոցների շահագործումը հնարավորություն է տալիս կանխարգելել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունները, սպառողների համար առավել անվտանգ ու որակյալ արտադրանք ապահովել և աստիճանաբար նվազագույնի հասցնել բակային մորթը»,- շեշտել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը կարևորել է այս ոլորտում Հունաստանի կառավարության հետ առկա համագործակցության արդյունավետ փորձը և աջակցությունը՝ նշելով, որ սպանդանոցների կառուցումը շարունակական է լինելու, իսկ նախարարությունն իր առջև խնդիր է դրել՝ հանրապետության բոլոր մարզերում նմանօրինակ սպանդանոցներ հիմնել: Նախարարը հայտնել է նաև, որ անասնապահության ոլորտում մեծածավալ ներդրումներ են իրականացվում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի միջոցներով, որի շրջանակում էլ նախատեսվում է իրագործել անասնապահական մթերքների արտադրության արժեշտիքների հզորացումը, այդ թվում՝ սպանդանոցների կառուցումը: «Հունական կողմը ողջունում է սպանդանոցների բացումը, մենք ուրախ ենք, որ իրականացված ֆինանսական ներդրումները կիթանեն ազգային հաստատությունների կարողությունները՝ ուղղված որակյալ մսի և մսամթերքի արտադրությանը»,- նշել է Իոաննիս Տալիսը:

Դեսպանը ընդգծել է, որ երկու երկրների կառավարությունների գործընկերությամբ Հայաստանում իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ այլ ոլորտներում, այժմ ընթացքի մեջ է մեկ այլ ծրագիր, որն առնչվում է թունաքիմիկատներին և դրանց մնացորդային քանակների որոշմանը: Դեսպանը նաև համոզմունք է հայտնեց, որ երկուստեք փոխշահավետ համագործակցությունը հետագայում նույնպես կշարունակվի:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Սերգո Կարապետյանը պաշտոնական այցով մեկնել է Ավստրիա

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Ավստրիայի Հանրապետության գյուղատնտեսության, անտառատնտեսության, բնապահպանության և ջրային տնտեսության դաշնային նախարար Անդրե Ռուպրեխտերի հրավերով, պաշտոնական այցով մեկնել է Վիեննա: Նախարարը, պաշտոնական այցի շրջանակում, կհանդիպի Ավստրիայի Հանրապետության գյուղատնտեսության, անտառատնտեսության, բնապահպանության և ջրային տնտեսության դաշնային նախարար Անդրե Ռուպրեխտերի հետ:

Հանդիպման ավարտին նախատեսվում է ստորագրել փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Ավստրիայի գյուղատնտեսության, անտառատնտեսության, բնապահպանության և ջրային տնտեսության դաշնային նախարարության միջև գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին:

Հանդիպումներ են նախատեսված նաև Ավստրիայի, Եվրոպայի, ինտեգրման և արտաքին գործերի դաշնային նախարարության պաշտոնյաների, ինչպես նաև Չարգացման գործակալության տնօրենի հետ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարը կայցելի նաև Ավստրիայի անասնաբույժների ասոցիացիա, օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններ, նախատեսված են հանդիպումներ անասնաբուծության և կաթնարտադրության բնագավառի ավստրիացի գործարարների հետ: Այցի շրջանակներում նախարարը կհանդիպի նաև Ավստրիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Մասնագետները զգուշացնում են

Հանրապետությունում դիտվող խոնավ և տաք եղանակային պայմանները միանգամայն նպաստավոր են հարկապես կորիզավորների ծակոտկեն բծավորության և մի շարք այլ հիվանդությունների ու վնասարտների զարգացման համար:

Այդ կապակցությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետները խորհուրդ են տալիս պասկաթերթիկների թափվելուց հետո կատարել բուժման աշխատանքներ կորիզավոր պտղատեսակների հիմնական վնասատուների և հիվանդությունների դեմ (ծակոտկեն բծավորություն, մոնիալ այրվածք, պտղային փտում, շերտավոր պտղացեց, կազարկա)՝ համատեղելով միջատասպան և սնկասպան պատրաստուկներ: Խորհուրդ է տրվում 1 հա-ի



համար ծախսել մինչև 800լ բանվորական լուծույթ՝ 1-ին տարբերակ՝ օգտագործել 300 մլ սկոր կամ 800 մլ տոպազ՝ համատեղելով Նուրել-Դ 1.5 - 2 լ կամ կալիպսո 300 մլ: Փոքր այգետարածքների համար, որտեղ օգտագործում են ձեռքի կամ շալակի սրսկիչներ՝ նպատակահարմար է թունաքիմիկատի ծախսը կատարել 10 լ-ի հաշվով՝ սկոր 3 մլ, տոպազ 8 մլ, Նուրել-Դ -20 մլ կամ կալիպսո 3 մլ:

2-րդ տարբերակ - (10 լ ջրի հաշվով) խորուն 3.5մլ, պլնձիօքսիքլորիդ 50-70 գ, դելան 7մլ, բայլետոն 8 գ, ռուբի-գոն 8մլ, տոպսին 15-20 գր, բորոդյան հեղուկ 1%-ոց, պատրաստուկներից որևէ մեկով՝ համատեղելով կարատե 8 մլ, դուրսբան 20 մլ, դեցիս 5 մլ, զոլոն 25 մլ, սալոս 25 մլ, կոնֆիդոր մաքսի 0.7 գ, բագուդին 20 մլ, վալսարել 15 մլ, պատրաստուկներից որևէ մեկով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ԱՌԱՏ ԲԵՐՔԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐՈՎ

Գյուղատնտեսական տարին վատ չի սկսվել. «Թե՛ ձմռան, թե՛ գարնան ժամանակահատվածում, և թե՛ գյուղատնտեսության նախարարության նախնական գնահատականներով՝ այս տարի հատկապես՝ կեռասի, սալորի, ծիրանի ու տանձի առատ բերքի կանխատեսում կա», - հայտնել է ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը՝ ավելացնելով, որ բավականին լավատեսական հիմքեր կան մտածելու, որ այս տարի բավականին լավ բերք է լինելու, հատկապես՝ պտղատու ծառատեսակներից: Շատ լավ, խոստումնալից կանխատեսումներ կարող ենք անել կեռասենու լավ բերքի վերաբերյալ, սալորի տարբեր տեսակների, ծիրանի, դեղձի, բալի, խնձորի:

Ըստ Գառնիկ Պետրոսյանի՝ ծիրանի սպասվող բերքը լավ է լինելու բոլոր տեղանքներում՝ սկսած ամենահարավից՝ Մեղրու տարածաշրջանից, որտեղ շատ լավ բերք կա, մինչև Արարատյան հարթավայր, նախալեռնային գոտի, Կոտայք, Արագածոտն: Չնայած լավատեսական ցուցանիշներին՝ Արարատյան դաշտավայրի որոշ համայնքների, այդ թվում՝ Սուրենավանի որոշ գյուղացիներ պնդում են, որ ծիրանի բերք առհասարակ չի սպասվում, քանի որ նորմալ փոշոտում չի իրականացվել: Ըստ որում, մարզի և նաև գյուղի տարբեր հատվածներում տարբեր պատկեր է՝ լեռնային գոտիներում, որտեղ բողբոջումն ու ծաղկումը նախալեռնային և հարթավայրային հատվածներից ուշ է սկսվել, փոշոտումը կատարվել է, քանի որ մարտին ու ապրիլին տեղացած անձրևները չեն լվացել ծաղկափոշին:



Գյուղատնտեսության փոխնախարարն էլ նկատեց, որ, իսկապես, որոշ հատվածներում, իրոք, կան փոշոտման հետ կապված խնդիրներ, և այդ տարածքներում էլ «միջին բերք անպայման կա, իսկ շատ տարածքներում բերքը միջինից ավելի բարձր է»:

Նախորդ տարին, ծիրանի բերքի առումով, չափազանց աղքատ էր: 2013-ի 89 հազար տոննա ծիրանի բերքի համեմատ, այն տասն անգամ պակաս էր՝ մոտ 8 հազ. տոննա: Եվ ծիրանի գներն էլ սկսվում էին կիլոգրամի համար 2200-2500 դրամից, թեև որոշ ընտիր տեսակների համար սահմանված էր մինչև 8150 դրամ:

Գյուղատնտեսության փոխնախարարի խոսքով՝ լավ բերքի նախադրյալներ ունենալուց հետո, թիվ մեկ խնդիրը՝ դրա արտահանումն ու իրացումն է: «Քանի որ հասկանալի է, որ այն քանակությունը, որը սպասվում է, ներքին շուկայում չի կարող սպառվել», - նշել է գյուղատնտեսության փոխնախարարը:

Ի պատասխան հարցի, թե ԵՏՄ-ին անդամակցելուց հետո, գյուղմթերքի արտահանման առումով, Հայաստանի համար ինչն է հեշտացել, փոխնախարարը նկատեց, որ եթե անցյալում անպայման հարկավոր էր բուսական մթերքի ծագումը հաստատող փաստաթուղթ-հավաստագիր ունենալ, ապա այս պահանջը հանված է, ինչպես նաև դրա համար վճարումները: Բուսասանիտարական նմուշառման հավաստագրի վճարումները հանված են, միայն մաքսային բեռի ձևակերպման ժամանակ տեսուչը տեղում զննում է բեռը, անմիջապես ձևակերպում է փաստաթղթերը, եթե, իհարկե, կասկածներ չեն լինում: Իսկ կասկածների դեպքում, շատ արագ լաբորատոր փորձաքննություն է կատարվում:

Գառնիկ Պետրոսյանը հավելեց, որ արտահանման ամբողջ սեզոնի ընթացքում գյուղատնտեսության նախարարությունը սահմանելու է շուրջօրյա հերթապահություն, օպերատիվ արձագանքելու են բոլոր զանգերին ու ահազանգերին:

Հույսեր կան նաև, որ, կապված ոռոգման համակարգի հետ խնդիրներ չեն լինի, քանի որ վաղօրոք, ՀՀ ԳՆ Սերգո Կարապետյանի հանձնարարությամբ, դեկտեմբերից ջրամատակարարման ապահովման հետ կապված աշխատանքներ են տարել, ջրամբարներում էլ անհրաժեշտ քանակությամբ ջուր է կուտակված:

Լավ վիճակում են նաև հացահատիկային մշակաբույսերի ցանքերը: Մեծ ակտիվություն կա բանջարաբուսության ցանքատարածքների ավելացման առումով: Ըստ փոխնախարարի՝ հատկապես մեծացել է տեղական սորտի սերմերի և սածիլների նկատմամբ պահանջարկը:

ՏՎՈՒՇ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

«ՀՀ գյուղատնտեսության և նախարարության «ԳՏԻԳ» ՊՅ-ի կողմից իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման» ծրագրի շրջանակներում, Տավուշի մարզում դեռևս 2011 թ.-ից իրականացվում է արոտավայրերի բարելավման ծրագիրը, որը միտված է մարզում անասնաբուծության զարգացմանը:

Ծրագրում ընդգրկված՝ Ներքին Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևբար, Աջաջուր, Լուսաձոր, Ոսկեպար, Բաղանիս, Ջուջևան և Դավեղ համայնքներում ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ: Նշված համայնքներում մինչև 2014թ. ավարտվել են արոտավայրերի ջրարքիացման և սարամասերն իրար կապող ճանապարհների ջրահեռացման շինարարական աշխատանքները, իսկ կոոպերատիվների կողմից ձեռք են բերվել 11 միավոր Բելառուս ՄՏ2-82 մակնիշի տրակտոր, 9 միավոր հավաքիչ-մամիչ, 10 միավոր տրակտորային խոտհնձիչ, ևսույնքան տրակտորային

2011թ. ներկրվել էին Ջերսեյ ցեղի 80 գլուխ հողի երինջներ, որոնք ներկայումս, խմբակային կարգով, պահվում են Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի համար նախատեսված անասնապահական համալիրում: Իսկ 15 գլուխ Էգ հորթեր, որպես երինջացու, կոոպերատիվ հիմունքներով, տրամադրվել են Կիրանց և Նավուր համայնքներին, որոնց համար ևս կառուցվել են ֆերմաներ: Ընթացքի մեջ են Բարեկամավանում նմանատիպ ֆերմայի կառուցման նախագծա-նախահաշվարկային աշխատանքները:

2014թ. սկսվել և ընթացիկ տարում ավարտվել են Գանձաքար և Գոշ համայնքներում միևնույն ֆերմաների կառուցման աշխատանքները, իսկ Արծվաբերդ և Բարեկամավան համայնքներում՝ նախատեսվում է ավարտել 2015 թ.:

Հիմնադրամի կողմից Լուսաձոր համայնքում գտնվող անասնապահական համալիրում 2014թ. կառուցվել է նոր հորթանոց՝ տոհմային հորթեր բուծելու և մինի ֆերմաներին տրամադրելու նպատակով:



խոտհավաք և 9 գուրան:

2014 թ. ծրագրում ընդգրկվել և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ են ստեղծվել նաև Նավուր, Չինչին և Պառավաքար համայնքներում:

Նավուրում հոկտեմբերին սկսվել և ընթացքի մեջ են արոտավայրերի ջրարքիացման և սարամասերն իրար կապող ճանապարհների ջրահեռացման շինարարական աշխատանքները, իսկ Պառավաքարինը՝ դեռևս նախագծա-նախահաշվարկային փուլում է:

Չինչինի կոոպերատիվը ձեռք է բերել 1 Բելառուս ՄՏ2-82 մակնիշի տրակտոր և գուրան, իսկ Պառավաքարինը՝ 1 Բելառուս ՄՏ2-82 մակնիշի տրակտոր և հացահատիկահավաք կոմբայն: Նավուրի, Չինչինի և Պառավաքարի կոոպերատիվները պահանջվող տրակտորները և գյուղգործիչներն ամբողջությամբ կստանան 2015 թ. մինչև հունիս ամիսը:

«Մարզի Վարագավան, Վերին Ծաղկավան, Տավուշ, Չինարի, Արծվաբերդ, Իծաքար և Նորաշեն համայնքների ղեկավարները դիմել են մարզպետարան՝ իրենց համայնքները ևս ընդգրկելու վերոնշյալ ծրագրում, որի համար մեր կողմից համապատասխան միջնորդագիր է ներկայացվել ծրագրի ղեկավարությանը», - ասում է մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուբոյանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակներում, որպես տոհմային կորիզ, դեռևս

Հիմնադրամի անասնապահական համալիրում կառուցվել են կաթի վերամշակման, պանրի և խտացված կերերի արտադրամասեր: «Ի դեպ, հիմնադրամի կողմից կաթի 1 լիտրը՝ 160 դրամով, մթերում է կատարվում նաև մարզի այլ համայնքներում: Ընթացիկ տարում նախատեսվում է մթերում կազմակերպել նաև Բերդի տարածաշրջանում ամկա կաթի ընդունման կետերում (հավաքված կաթը կտեղափոխվի հիմնադրամի միջոցներով): Սարիգյուղ և Այգեհովիտ համայնքներում կառուցված գյուղատնտեսական տեխնիկայի կայանները սպասարկում են Իջևանի տարածաշրջանի 15 համայնքների մոտ 6500 գյուղացիական տնտեսությունների», - հավելում է Վաղարշակ Սուբոյանը:

Մարզպետարանի մասնագետների խորհրդատվությամբ, «ՀիմնաՏավուշ» գարգացման հիմնադրամի կողմից 2014թ. գարնանը մարզի ցրտահարությունից տուժած 25 համայնքների հողօգտագործողներին, անվճար կարգով, տրամադրվել են 8000 հատ խաղողի արմատակալներ, իսկ 13 համայնքի հողօգտագործողներին՝ 10000 հատ արքայանարնջի տնկիներ, որոնք օգտագործվել են՝ ինչպես այգիների վերականգնման, այնպես էլ՝ նորերի հիմնման համար: Դիտավան համայնքում հիմնվել է 3.2 հա պտղատու այգի, որտեղ աճեցվելու են հիմնականում արքայանարնջ, նուռ և թուզ, ինչի պահանջարկն օրեցօր ավելանում է մեր հանրապետությունում:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ԾԱԿՈՏԿԵՆ ԲԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Clasterosporum carpophilum Aderh

Սնկային հիվանդությունները դասվում են ինֆեկցիոն (վարակալի) հիվանդությունների շարքին...

Յիվանդության հարուցիչ սունկը (Clasterosporum carpophilum) ձմեռում է վարակված շվերի մեջ...



Սկ.1. Յիվանդության ախտանիշները

առաջացնում է Նոր սպորներ, որոնք ձմեռած սպորների հետ հանդիսանում են հիվանդության տարածման աղբյուր:

Վնասի ախտանիշները

Վարակվում են ծառերի բողբոջները, տերևները, պտուղները և միամյա շվերը: Տերևների վրա վարակն արտահայտվում է կլոր, սկզբում՝ կարմրամանուշակագույն, կարմրագորշավուն, հետագայում՝ բաց շագանակագույն բծերի ձևով...

րի վրա առաջանում են կետանման, ապա 2-5 մմ մեծության կարմրավուն բծեր, դրանք սկզբում կլորավուն են...

Պտուղների վրա վարակի արտահայտման տարբեր ձևեր կան: Սկզբում, պտուղների վրա առաջանում են կարմրագորշավուն մակերեսային բծեր...

Առանձնապես վտանգավոր է բողբոջների ու ծաղիկների վարակվելը: Յիվանդ բողբոջները մահանում են: Ի տարբերություն ցրտահարվածի՝ այդպիսի բողբոջները սև, մի տեսակ լաքապատվածի տեսք ունեն:

Յիվանդության տարածման և ծառերի վարակի կանխատեսման համար պետք է հաշվի առնել այն, որ սունկը զարգանում է տաք և խոնավ եղանակներին:

Հիվանդության դեմ կիրառվող հնարավորագրված պայքարի բաղադրիչները

Մեխանիկական մեթոդ

- 1. Աշնանը՝ տերևաթափից հետո, կտրել վարակված շվերը և հավաքել ծառերի վրա մնացած ու թափված հիվանդ պտուղները, տերևներն ու ոչնչացնել:
2. Ծառերի բերքն ու կմախքային ճյուղերը անհրաժեշտ է սպիտակեցնել 20 %-ոց կրակաթով:
3. Խեժահոսող վերքերը մաքրել, կտրել՝ մի փոքր ընդգրկելով նաև առողջ հյուսվածքից, վարակագերծել 3%-ոց պղնձարջասպի լուծույթով:
4. Եթե ծառի վրա կան ցրտահարության ճեղքեր, դրանք անհրաժեշտ

ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

ԽՈՋԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՐ

Անասնաբույժների Եվրոպական ֆեդերացիան 2013-ին հանդես եկավ հայրապարտությամբ, որ խոզերի աֆրիկյան ծանրախորի տարածումը գնալով ավելացել է մասնավորապես, հասնելով Լիբիյա, ապա՝ ՌԴ և Բելառուսի Հանրապետություն: Այս պայմաններում, բացի պայքարից և կանխարգելիչ միջոցառումներից, խորհուրդ է արվում մտածել նաև այլընտրանքային անասնաբուծություն զարգացնելու ուղղությամբ:

Կրասնոդարի երկրամասում, այս առումով, դեռ անցյալ տարվանից քայլեր են արվում. երկրամասի իշխանություններն առաջարկում են խոզաբուծական տնտեսություններին, այլընտրանքային անասնաբուծության անցնելու դեպքում, լուրջ ֆինանսական աջակցություն՝ փոխհատուցելով կատարվելիք ծախսերի

րաստում: Բացի այդ, հասունացած եղջյուրները, որ տարին մեկ նորացվում են, դրա համար լրացուցիչ աշխատանք չեն պահանջում և կարող են վաճառվել 250-500 եվրոյի սահմաններում:

Բացի մեղիքի, ամբողջական կենդանիների և եղջյուրների վաճառքից, այդ կենդանիները կարող են վաճառվել նաև որսի համար: Իսպանիան, որ 1000 հեկտարի վրա ունի 50 հազարից ավելի տնտեսություն, որոնց մի զգալի մասը նաև որսի հնարավորություններ է տրամադրում, տարեկան այստեղից 6 միլիարդ եվրոյի եկամուտ է ստանում:

Թե որքան եկամտաբեր է այս արտասովոր բիզնեսը, իսկ շուկան՝ ոչ հագեցած, ցույց է տալիս Նոր Զելանդիայի օրինակը՝ ունենալով ընդամենը 1,5 մլն գլխաքանակ, նրանք համաշխարհային շուկայի այս սեգմենտը գրավել են արդեն



մինչև 90 %-ը: Առայժմ հայտնի չէ, թե այստեղ գործողություններն ինչ ուղղությամբ կզարգանան, բայց ահա Լիտվայում և ՌԴ Սմոլենսկի մարզում, այլընտրանքային անասնաբուծության առումով, ակնառու հաջողությունների են հասել. եղջերուներ բուծելով՝ այդ տնտեսություններն արդեն երկրորդ տարում հասցրել են իրենց տարեկան շրջանաձուլող գումարը՝ մինչև 100-150 հազար եվրոյի: Կենդանիների վրա լիտվացիներն ու սմոլյակները (այդպես են իրենց կոչում այդ մարզի բնակիչները) խորհուրդ են տալիս կանգ առնել՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները:

Եղջերուի (եղնիկի) միսը շատ քիչ ճարպ է պարունակում, աչքի է ընկնում բարձր համային հատկություններով, նաև դիետիկ է համարվում, այդ պատճառով կայուն բարձր պահանջարկ ունի շատ երկրներում, առաջին հերթին՝ Գերմանիայում և Դանիայում: Մսի գինը, ըստ երկրների և որսի սեզոնի, տատանվում է 5-20 եվրո/կգ սահմաններում:

Ամբողջական կենդանի վաճառվում է հետևյալ գներով՝ մատուցող՝ 1000 եվրո՝ եղջերուի և 700՝ եղնիկի համար: Հասուն կենդանիների գինը, կարող է հասնել 4000-5000 եվրոյի, քանի որ դրանք վերարտադրության համար պատրաստ ցեղական կենդանիներ են: Բացի ապրանքային նպատակներից, դրանք կարելի է պահել ագրո-էկո տուրիզմի համար. եվրոպացիները շատ են սիրում երեխաների հետ այցելել նման տնտեսություններ, որտեղ երեխաները կերակրում, շփվում են կենդանիների հետ: Նման այցելուները, սովորաբար, վճարում են 2-3 եվրո, իսկ տարեկան դրանց թիվը կազմում է մի քանի հազար: Եղջյուրները, մինչ դրանց կարծրացումը, կտրում և վաճառում են Զինաստանում, Կորեայում և մի շարք ասիական երկրներում, որտեղ դրանցից բարձր պահանջարկ ունեցող դեղորայք են պատ-

55 %-ով՝ միաժամանակ 90 %-ով բավարարելով Գերմանիայի պահանջարկը:

Վերջին 2-3 տասնամյակներում թափ առած եղջերաբուծության զարգացմանը շատ են նպաստել եղջերուների բուծման Եվրոպական ֆեդերացիան (FEDFA) և եղջերուների և այլ սմբակավոր կենդանիների միջազգային ասոցիացիան (IDUBA):

Մեր երկրի համար հավասարապես ընդունելի կլինի այս գեղեցիկ կենդանիների բուծումը թե՛ նախալեռնային, և լեռնային շրջաններում՝ պարսպապատված անտառներում, որոնց կից նաև կերային մշակաբույսերով ցանքատարածություններ կան, և որոնք հիմնականում կօգտագործվեն տուրիզմի և որսի համար. ցածրադիր նախալեռնային տարածքներում՝ տուրիզմի և մսի արտադրության նպատակներով:

Որպես մեկնարկային՝ կարելի է բերել Սմոլենսկի մարզում այժմ բարգավաճող «Դենպր-Խոլմ» որսորդական տնտեսության առաջին քայլերի օրինակը, որոնք ներկրել են իրենց կենդանիների Անգլիայից՝ 5 արու և 45 էգ՝ Woburn և Warnham տնտեսություններից, և տեղակայել 15 հա տարածության վրա: Այսօր դրանց գլխաքանակը մոտենում է շուրջ 100-ի: Ձմեռելու համար գոմեր են կառուցվել, որոնց նախագիծը, ինչպես և անձնակազմի ուսուցումը, ապահովել են անգլիացիները: Նրանք նաև առաջարկել են արածեցումը համալրող հատուկ հավելումներ, որոնք նպաստում են եղջյուրների արդյունավետ զարգացմանը: Տնտեսությունում արդեն մեղիքի վաճառքի սկզբունք գոյություն ունի՝ խոտանված կենդանիների հաշվին: Նախագծվում է քրթեջային համալիր՝ որսորդների համար, որը սպասվում է Եվրոպայից: Այս ամենը 2 տարվա համար ավելի քան գահացուցիչ է:

